**Արձանագրություն N3**

**ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով ընթացակարգի**

**գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 11 հուլիսի 2019թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Ալեյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Մխիթարյանը և Ա. Խաչատրյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

<<Գազկոմշին>> ՍՊԸ – Տնօրեն Մ.Միսակյանը
<<Մ-Գրուպ Էներգոսերվիս>> ՍՊԸ- Լիազորված անձ Հ.Կակոյանը
<<Բիդեք>> ՍՊԸ- Լիազորված անձ Դ.Օհանյանը

## 1. ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով ընթացակարգի բանակցությունների մասին

**Օրակարգ՝** Ջրային կոմիտեի կարիքների համար՝ ջրային ենթակառուցվածքների վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով **ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա** ծածկագրով ընթացակարգի մասնակցների կողմից ներկայացված գնային առաջարկների շուրջ բանակցությունների վերաբերյալ՝ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետի և հրավերի 8.6 և 8.7 կետերի *(սույն ընթացակարգի գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա)*:

Ելույթ ունեցավ գնահատող հանձնաժողովի նախագահ Կ. Ալեյանը և հրապարակեց մասնակիցների տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկները:

## 2. Բանակցությունների արդյունքում մասնակցների առաջարկած գների մասին

Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին (11.07.2019թ. ժամը 12:00) **ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա** ծածկագրով մրցույթի մասնակիցների՝ <<Գազկոմշին>> ՍՊԸ-ի, <<Մ-Գրուպ Էներգոսերվիս>> ՍՊԸ-ի և <<Բիդեք>> ՍՊԸ-ի ներկայացուցիչների կողմից առաջարկած գները՝

| Ջրային կոմիտեի կարիքների համար՝ ջրային ենթակառուցվածքների վերականգնման աշխատանքների ձեռքբերում | |
|---|---|
| ՀՀ դրամ | |
| **Չափաբաժին 1** | |
| **<<Բիդեք>> ՍՊԸ** | |
| **Մասնակցի առաջարկած գինը** | |
| 56 208 333 /առանց ԱԱՀ/<br>11 241 667 /ԱԱՀ/<br>67 450 000 /ընդհանուր/ | |
| **Չափաբաժին 2** | |
| <<Գազկոմշին>> ՍՊԸ | <<Մ-Գրուպ Էներգոսերվիս>> ՍՊԸ |
| Մասնակցների առաջարկած գները | |
| 66 666 666.67 /առանց ԱԱՀ/<br>13 333 333.33 /ԱԱՀ/<br>80 000 000 /ընդհանուր/ | 67 333 334 /առանց ԱԱՀ/<br>13 466 666 /ԱԱՀ/<br>80 800 000 /ընդհանուր/ |

**3. Բանակցությունների արդյունքում հանձնաժողովի որոշման մասին**

---

**Հանձնաժողովը որոշեց.**

1. **1-ին չափաբաժնի** 1-ին տեղ զբաղեցրած մասնակից համարել <<Բիդեք>> ՍՊԸ-ին:
2. **2-րդ չափաբաժնի** 1-ին տեղ զբաղեցրած մասնակից համարել <<Գազկոմշին>> ՍՊԸ-ին:
3. **3-րդ և 4-րդ չափաբաժինների** 1-ին տեղ զբաղեցրած մասնակից համարել <<ՎԱՐԴԱՆՅԱՆ-ՇԻՆ>> ՍՊԸ-ին:
4. **1-ին չափաբաժնի** 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից համարել <<Գազկոմշին>> ՍՊԸ-ին:
5. **2-րդ չափաբաժնի** 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից համարել <<Մ-Գրուպ Էներգոսերվիս>> ՍՊԸ-ին:
6. **3-րդ և 4-րդ չափաբաժինների** 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից համարել <<ԷՄՕՇԻՆ>> ՍՊԸ-ին:
7. Հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակիսների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև **ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա** ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:
8. **1-ին** չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցրած <<Բիդեք>> ՍՊԸ-ին, **2-րդ** չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցրած <<Գազկոմշին>> ՍՊԸ-ին և **3-րդ և 4-րդ** չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցրած <<ՎԱՐԴԱՆՅԱՆ-ՇԻՆ>> ՍՊԸ-ին առաջարկել՝ ***երեք աշխատանքային օրվա ընթացքում*** էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ **ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա** ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված (Հավելվածներ 3, 3.1 և 3.2) փաստաթղթերը:

## 4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վերաբերյալ

---

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

| | | |
|---|---|---|
| Նախագահ | ---------- | Կ. Ալեյան |
| Անդամներ | ---------- | Է. Մխիթարյան |
| | ---------- | Ա. Խաչատրյան |
| Քարտուղար | ---------- | Ա. Սարգսյան |